

Արձանագրություն թիվ 11  
ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2019թ հուլիսի 3-ին

- Օրակարգը՝
1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
  2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2018-19 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
  - 3.«Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
    - 4.Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
    - 5.Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր- Տ.Վ.Ղոչիկյան

Ներկայացնեմ Քիմիայի ֆակուլտետի Գիտխորհրդի թիվ 11 նիստի օրակարգը, 16 անդամներից ներկա են 12-ը՝ հետևաբար քվորում կա: Վերոնշյալ օրակարգը հաստատելուց հետո անցնենք աշխատանքի:

1. Օրակարգի առաջին հարցը պաշտպանությունների հարցն է: Քննարկելով ունեցած տվյալները կարող եմ ասել, որ մեր շրջանավարտների մեջ իրոք կան շատ հզոր ուսանողներ՝ զինված տեսական և փորձարարական գիտելիքներով: Դա շատ ոգևորող հանգամանք է: Չնայած դրան նաև ունենք ուսանողներ, որոնք ունեն ցածր առաջադիմություն, և քննական պարտքեր: Մյուս ուսումնական տարում պետք է ավելի զգոն լինել՝ վատ հաճախումները, լաբորատոր աշխատանքներին չներկայանալը պետք է ահագանգ լինի և նման ուսանողները մեխանիկորեն չպետք է մասնակցեն ընթացիկ քննություններին: Ուսանողները պետք է ազատ ժամանակ զբաղվեն փորձարարական աշխատանքներով, լինեն գիտական լաբորատորիաներում: Այս գործընթացը կապահովի նրանց հմտությունները: Կուրսային աշխատանքները նույնպես կարևոր բաղադրիչ են հանդիսանում, ես գտնում եմ, որ մեր մոտեցումը՝ դրանց ցուցադրական պաշտպանությունը, քննարկումը ամբիոններում, ուսանողին հնարավորություն է տալիս ինքնուրույն մտածելու , աշխատելու և նախապատրաստում է ավարտական աշխատանքներին:
2. Տ.Վ.Ղոչիկյան – այժմ լսենք Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյանի տարեկան հաշվետվությունը.

Ա.Բ.Մարտիրոսյան,- 2018/2019 ուս տարում իրականացվել է 11 ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել է ամբիոնի ուսումնական և գիտական գործընթացները: Մեր ամբիոնում այս տարի պաշտպանվել է 10 ավարտական աշխատանքներ և 4 մագիստրոսական թեզեր: Ամբիոնը ունի 2 ասպիրանտ և 1 դոկտորանտ: Ամբիոնը համագործակցում է Լեոնամետալուրգիայի, Անօրգանական քիմիայի և Քիմիական ֆիզիկայի ինստիտուտների հետ: Լավ է դրված նաև միջ ամբիոնային համագործակցությունը: 18/19 ուս. տարում տպագրվել է 30 գիտական հոդված, 4 գիտական թեզիս, 1 մենագրություն և 1 դասագիրք: Էկոլոգիայի անվտանգության կենտրոնում տպագրվել է 12 հոդված: Ես մեկ առաջարկություն ունեմ, քանի որ արդեն ֆակուլտետում հիմք է դրված անգլերեն լեզվով դասավանդումը օտարերկրյա ուսանողների համար, ապա կարելի է ներկայացնել օտար լեզվով “Քիմիա” ծրագիրը:

Տ.Վ.Ղոչիկյան – հարցեր ունեք, Ա.Բ.Մարտիրոսյանին

Կ.Ռ.Գրիգորյան- Ամբիոնը այս տարի նոր սարքավորումներով համալրվել է:

Ա.Բ.Մարտիրոսյան – Ոչ, նոր սարքավորումներ չունենք, սակայն հին սարքավորումները վերականգնել ենք և օգտագործում ենք: Այս տեղ խնդիրը սարքերի հետ աշխատելն է: Չի կարող մեկ մասնագետը բոլոր սարքերին ամբողջությամբ տիրապետել հավասարապես: Դրա համար աշխատակիցներից մի քանիսին սովորացնում ենք և նրանց ղեկավարությամբ էլ իրականացնում աշխատանքները այդ սարքերով:

3. Տ.Վ.Ղոչիկյան - «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում: Դեկանատից ամբիոնի վարիչներին տրվել է սոց. հարցման արդյունքները: Մենք արդեն ամբիոնի վարիչների հետ հանդիպել ենք և քննարկել խնդիրները որոնց մասին նշված է եղել: Եթե հարկ լինի ապա նորից կհանդիպենք և հարցը կքննարկենք գիտխորհրդում:

4. Այժմ չենք քննարկի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատման հարցը: Քանզի անհատական պլաններում չենք հաստատելու առաջին կուրսեցիների ծանրաբեռնվածություն և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի ծրագրերում:

Անցնենք օրակարգի 5-րդ կետին: Այստեղ ունենք 2 հարց

Ա) Մենք արդեն իսկ քննարկել էինք “Օրգանական քիմիայի” ամբիոնից պրոֆեսոր Գ.Գ.Թոքմաջյանի և Լ.Վ.Կարապետյանի “ՄՆՆԴԻ ՔԻՄԻԱ” ուսումնական ձեռնարկը և տվել էինք արտաքին գրախոսման ՀԱԱՀ: Այսօր այդ աշխատանքը մեզ մոտ է և գրախոսվել է ՀԱԱՀ Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի վարիչի՝ տ.գ.թ.,դոցենտ Լ.Ա.Այդինյանի, նույն ամբիոնի դոցենտներ՝ Է.Լ.Սահակյանի և Մ.Գ.Կարախանյանի կողմից: Կարծիքը դրական է և

նրանք նշում են, որ ԵՊՀ-ի, Քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը կարող է երաշխավորել սույն ձեռնարկը տպագրության: Հարցը դնում ենք քվեարկության:

Որոշեցին –քվեարկության միաձայն կողմ արդյունքով տպագրության երաշխավորել պրոֆեսոր Գ.Գ.Թոքմաջյանի և Լ.Վ.Կարապետյանի “ՄՆՆԴԻ ՔԻՄԻԱ” ուսումնական ձեռնարկը:

Բ) Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդին է դիմել” Էկոլոգիական անվտանգություն” կենտրոնի գիտաշխատող Ս.Ս.Հայրապետյանը՝ Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարության գիտության կոմիտեի եվ Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության«ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթի մասնակցելու նախագծով:

Նախագիծը ներկայացված է պահանջներին համապատասխան: Դնենք քվեարկության

Որոշեցին –քվեարկության միաձայն կողմ արդյունքով երաշխավորել Էկոլոգիական անվտանգություն” կենտրոնի գիտաշխատող Ս.Ս.Ներսիսյանը՝ Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարության գիտության կոմիտեի եվ Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության«ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթի մասնակցելու նախագիծը

Քիմիայի ֆակուլտետի  
Գիտ.խորհրդի նախագահ,  
ք.գ.դ., պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Քիմիայի ֆակուլտետի  
Գիտ.խորհրդի քարտուղար,  
ք.գ.թ., դոցենտ

Մ.Ա.Սամվելյան